ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱԿԵՐՏԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ
С. ГЕХАКЕРТ

Գեղակերտի գյուղապետարան հեռ. 093250663 , 0231 63447
Село Гехакерт тел. 093250663 , 0231 63447

N 139

«01» «---------09---------» 2011թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
Ա. Դահրամանյանին

Մեծարգո պարոն Մարզպետ

Ձեզ է ներկայացվում ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ղեկավարի 2011թ. օգոստոս ամսվա ընթացքում ընդունած որոշումները: Օգոստոս ամսին կարգադրություններ չեն արձակվել:

Առդիր՝4 էջ:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 8432-11
«02» 09 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<20>> օգոստոսի 2011թ. N49

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՌԼԵՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի առաջին մասի 17-րդ կետով,<< Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հարություն Գևորգյանի լիազոր ներկայացուցիչ՝ Արմեն Ղարիբյանի դիմումը

Որոշում եմ՝

1. Վերականգնել Գեղակերտի գյուղական համայնքի Ավետիք Իսահակյան փողոցի թիվ 30 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Հարություն Կառլենի Գևորգյանի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 1385.0քմ օրինական հողամասի վրա գտնվող բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ:
2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:
3. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանման կողմից:
4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Հարություն Կառլենի Գևորգյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենք- շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2011թվական օգոստոսի20

գյուղ Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<20>> օգոստոսի 2011թ. N48

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 2-ի թիվ 9 նիստի թիվ 2 որոշումը և համայնքի բնակիչ Հարություն Գևորգյանի լիազորված անձ Արմեն Վարդկեսի Ղարիբյանի դիմումը

Որոշում եմ

1. 0036-0003 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողակտորի վրա կառուցած բնակելի տանը տրամադրել հասցե՝ Ավետիք Իսահակյան փողոց, տուն 30:
2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2011թվական օգոստոսի 20
Գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» օգոստոսի 2011թ. N 47

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 2-ի թիվ 9 նիստի թիվ 2 որոշումը և համայնքի բնակիչ Նինել Վարդանյանի դիմումը

Որոշում եմ

1. 059-003 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝ Արամ Խաչատրյան փողոց, 6:

2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2011թվական օգոստոսի16
Գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«02» օգոստոսի 2011թ. N46

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 2-ի թիվ 9 նիստի թիվ 2 որոշումը և համայնքի բնակիչ Անդրանիկ Ավետիսյանի դիմումը

Որոշում եմ

1. 009-011 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողակտորին տրամադրել հասցե՝ Կարպ Խաչվանքյան փողոց, 22:
2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2011թվական օգոստոսի 02
Գ. Գեղակերտ